

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԿԻՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով (այսուհետ Աշխատակարգ) սահմանվում է ՀՀ ԱԺ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովին (այսուհետ Հանձնաժողով) կից աշխատանքային խմբի (այսուհետ` խումբ) գործունեության կարգը, որոնք բխում են և չեն կարող հակասել «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքին, Ազգային ժողովի 2017 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» ԱԺՈ-267-Ն որոշմանը և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման գյուղատնտեսության եվ բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակարգին :
2. Խումբը հասարակական հիմունքներով գործող Հանձնաժողովին կից ոլորտային օրենսդրական խնդիրների շուրջ բազմակողմանի և համալիր խորհրդակցական հարթակ է, որի նպատակն է խնդիրների բարձրաձայնման միջոցով Հանձնաժողովի օրենսդրական գործունեությանը աջակցելը և օրենսդիր-գործադիր-քաղհասարակություն շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ու երկխոսության ապահովելը:
3. Խմբի ստեղծման համար հիմք է հանդիսացել 2019թ-ի ապրիլի 12-ի Հանձնաժողովի Հ.1 որոշումը:

II. ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Խումբն իր աշխատանքները կազմակերպում է աշխատանքային քննարկումների միջոցով:
2. Խումբն իրավունք ունի`
 - 2.1. անհրաժեշտության դեպքում դիմել Հանձնաժողովի նախագահին, որպեսզի վերջինիս հրավերով Աշխատանքային խմբի քննարկումներին մասնակցեն ՀՀ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները, Ազգային ժողովի մշտական գործող հանձնաժողովների նախագահները, անկախ փորձագետները կամ այլ շահագրգիռ անձիք` Խմբի քննարկումներին առաջադրված խնդիրների համատեղ քննարկման նպատակով.
 - 2.2. Խմբում ընդգրկված Հանձնաժողովի անդամի միջոցով ԱԺ-ի քննարկմանը ներկայացնելու օրենսդրական առաջարկություններ ոլորտային խնդիրների և հիմնահարցերի լուծման վերաբերյալ,

- 2.3. դիմել Հանձնաժողովի նախագահին վերջինիս դիմումով ՀՀ պետական մարմիններից՝ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով:
3. Խմբի հերթական քննարկումները գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ:
4. Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել արտահերթ քննարկում՝ Խմբի ղեկավարի կամ Խմբի անդամների առնվազն 1/3-ի նախաձեռնությամբ:
5. Խմբի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Խմբի անդամների 2/3-ը:
6. Խմբի քննարկմանը հարցեր կարող է ներկայացնել Խմբի յուրաքանչյուր անդամ, ներկայացվելիք հարցը նախօրոք ներկայացնելով Խմբի քարտուղարությանը (այսուհետ՝ Քարտուղարություն):
7. Խմբի քննարկումների օրակարգի նախագիծը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը Քարտուղարությունը Խմբի անդամներին է տրամադրում հերթական քննարկումից առնվազն 5 օր առաջ:
8. Խմբի յուրաքանչյուր քննարկում սկսվում է օրակարգի հաստատմամբ և նախորդ քննարկման ընթացքում քննարկված հարցերի մասին Քարտուղարության զեկուցմամբ:
9. Խմբի քննարկման օրակարգում ընդգրկված հարցերը ներկայացնում է Քարտուղարությունը կամ հարցն առաջարկող Խմբի անդամը:
10. Հարցի քննարկման ընթացքում Խմբի անդամների կողմից նոր առաջարկներ ներկայացնելու կամ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում հարցի քննարկումը տեղափոխվում է հաջորդ քննարկում:
11. Խմբի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, որոնք Խմբի ղեկավարի կողմից ներկայացվում են Հանձնաժողովին:
12. Խմբի որոշումներն Հանձնաժողովի համար ունեն խորհրդատվական բնույթ:
13. Խմբի քննարկումներն արձանագրվում են Քարտուղարության կողմից: Արձանագրության մեջ ամրագրվում են օրակարգում ընդգրկված հարցերը, առաջարկությունները կամ լուծումները:
14. Խմբի արձանագրությունը և որոշումները քննարկումից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարությունը տրամադրում է Խմբի անդամներին, հրապարակվում է Ազգային ժողովի պաշտոնական վեբ կայքում, սոցիալական ցանցերի էջերում:

III. Ա ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐԸ

1. Խմբի ղեկավարը նշանակվում է Հանձնաժողովի որոշմամբ:
2. Խմբի ղեկավարը՝
 - 2.1. կազմակերպում և ղեկավարում է Խմբի աշխատանքները,
 - 2.2. վարում է Խմբի քննարկումները,
 - 2.3. ստորագրում է Խմբի քննարկումների արձանագրությունները.

- 2.4. հանձնարարականներ է տալիս Քարտուղարությանը,
 - 2.5. բաշխում է պարտականությունները Խմբի անդամների միջև,
 - 2.6. Ապահովում է սահմանված ժամկետում Խմբի գործունեության արդյունքների և ընդունած որոշումների մասին զեկույցի ներկայացումը Հանձնաժողով:
3. Խմբի ղեկավարի բացակայության դեպքում Խումբը նախագահում է Հանձնաժողովի անդամը կամ Հանձնաժողովի փորձագետը:

IV. ԽՄԲԻ ԱՆՂԱՄՆԵՐԸ

1. Խմբի անդամներն են, Խմբին անդամակցելու ցանկություն հայտնած Հանձնաժողովի անդամները, Հանձնաժողովի փորձագետներ, պատգամավորի օգնականներ և այն Կազմակերպությունները կամ անհատները, որոնք ցանկություն կհայտնեն միանալ Խմբին և կբավարարեն սույն փաստաթղթով սահմանված չափորոշիչներին:
2. Խմբի անհատական կազմը հաստատում է Հանձնաժողովի նախագահը կամ Խմբի ղեկավարը:
3. Հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ կամ Խմբի ղեկավարի, Հանձնաժողովի որոշմամբ Խմբի անդամի անդամակցությունը դադարում է.
3. Խմբի նիստերին երեքից ավելի անհարգալի բացակայության դեպքում;
 - 3.2. Խխմբի անդամի դիմումի համաձայն;
 - 3.3. Սույն Աշխատակարգի 25-րդ կետով սահմանված Խմբի կազմում ընդգրկվելու իրավունք ունեցող Կազմակերպություններին կամ անհատներին ներկայացվող չափորոշիչների փոփոխման դեպքում;
 - 3.4. Խմբի աշխատանքներին խոչընդոտելու, Խմբի անդամների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի կամ Խմբի անդամների ընդհանուր թվի մեծամասնության առաջարկով:
4. Խմբի կազմում կարող են ընդգրկվել, Խմբի քարտուղարությանը դիմում ներկայացրած այն Կազմակերպությունները և (կամ) անհատները, որոնք ունեն ոլորտային գործունեություն, կրթություն և որակավորում,
5. Խմբի անդամն իրավունք ունի`
 - 5.1. քննարկմանը ներկայացնելու հարցեր,
 - 5.2. ներկայացնելու առաջարկություններ օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ:

V. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Խմբի գործունեության կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Խմբի Քարտուղարությունը` Հանձնաժողովի փորձագետները:

2.Խմբի հերթական քննարկման օրակարգի նախագծում ընդգրկված հարցերը մշակում և Խմբի ղեկավարին է ներկայացնում Քարտուղարությունը: Խմբի ղեկավարն այն հաստատելուց հետո տրամադրում է Խմբի անդամներին:

3.Քարտուղարությունը պարտավոր է ապահովել Խմբի քննարկմանը դրված հարցերի վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը, ինչպես նաև հնչեցված առաջարկությունների վերլուծությունն ու ամփոփումը:

4.Խմբի Քարտուղարությունը կազմում է Խմբի քննարկումների արձանագրությունը:

VI. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

1.Սույն Աշխատակարգը, դրանում կատարվող փոփոխությունները հաստատվում է Հանձնաժողովի կողմից: